Արձանագրություն N 4
«Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԲՆԱ-21/49» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

ք. Երևան «18» հոկտեմբերի 2021թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Ռուբեն Սիմոնյանը
Հանձնաժողովի բացող անդամներ՝
Հասմիկ Մանուկյանը
Մարինե Ասրյանը
Հանձնաժողովի գնահատող անդամներ՝
Նարինա Սարգսյանց
Արա Սողոմոնյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Փառանձեմ Խաչատրյանը

Օրակարգ

1. Տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
3. Հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը.

1. Տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

(Փ. Խաչատրյան)

1.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները, գների նվազեցման նպատակով 18.10.2021թ. ժամը 11:00-ին Աճառյան 2 հասցեում բավարար գնահատված և 3-րդ, 5-րդ, 7-րդ, 9-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ և 16-րդ չափաբաժինների մասով գնային առաջարկ ներկայացրած բոլոր մասնակիցները հրավիրվել էին միաժամանակյա բանակցությունների, սակայն բանակցություններին մասնակցեցին «ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն 7-րդ չափաբաժնի մասվ, որի գնային առաջարկը մնաց անփոփոխ և «Մեդտեխսերվիս» ՍՊԸ-ն՝ 16-րդ չափաբաժնի մասով, որի գնային առաջարկը նվազեցվեց և սահմանվեց նոր գին՝

Չ/հ	Գնման առարկա	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գին
16	Մածկաթիակ	29,166.7	5,833.3	35,000

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

2. Հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Փ. Խաչատրյան)

2.1 18.10.2021թ.-ին հայտերի գնահատման նիստի ավարտի օրը, armeps (www.armeps.am) էլեկտրոնային գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված գնային առաջարկի հիման վրա՝ «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԲՆԱ-21/49» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված, հայտ ներկայացրած՝

- «Մեդտեխսերվիս» ՍՊԸ-ին 1-ին, 16-րդ չափաբաժինների մասով ճանաչել ընտրված մասնակից,
- «ՄԵԴ ՖԱՐՄ» ՍՊԸ-ին 2-րդ և 4-րդ չափաբաժինների մասով ճանաչել ընտրված մասնակից,
- «Ջի-Էն-Ջի» ՍՊԸ-ին 6-րդ չափաբաժնի մասով ճանաչել ընտրված մասնակից,
- «ՎԱԼԼԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին 8-րդ և 10-րդ չափաբաժինների մասով ճանաչել ընտրված մասնակից,
- «ԼԻԱՆԱ ԿԱՉՅԱՆՑ» ՍՊԸ-ին 11-րդ չափաբաժնի մասով ճանաչել ընտրված մասնակից,

2.2. 3-րդ, 5-րդ, 7-րդ, 9-րդ, 13-րդ, 14-րդ և 15-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած՝ համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի, 4-րդ կետի՝ պայմանագիր չկնքելու հիմքով և 12-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած՝ համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի, 3-րդ կետի՝ ոչ մի հայտ չներկայացվելու հիմքով

2.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել՝ «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԲՆԱ-21/49» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

2.4 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝ անգործության ժամկետ սամանել 5 օրացուցային օր:

2.5 Պայմանագիր կնքելու նպատակով ընտրված մասնակիցներին ծանուցել պայմանագրերի նախագծերը և առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել կից գրությամբ պայմանագրի նախագիծը երկու օրինակից, ինչպես նաև որակավորման ապահովումը (տուժանքի մասին համաձայնագիր և կից վճարման պահանջագիր), պայմանագրի կատարման ապահովումը (տուժանքի մասին համաձայնագիր և կից վճարման պահանջագիր):

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

3. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Փ. Խաչատրյան)

3.1 «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԲՆԱ-21/49» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել ոչ ուշ, քան գնման պայմանագիր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 11:00-ն, «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի շենքում, ք. Երևան, Աճառյան 2, 212 սենյակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ռ. Սիմոնյան

Անդամներ՝ _____ Ն. Սարգսյանց

_____ Ա. Սողոմոնյան

_____ Հ. Մանուկյան

_____ Մ. Ասրյան

Քարտուղար՝ _____ Փ. Խաչատրյան